ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխության 40-ամյակի առնչությամբ օրերին Պետական Պատմական թանգարանում բացվեց Հայաստանի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի ռեսպուբլիկական ցուցահանդես։ Ցուցահանդեսը արտացոլում է այն հոյակապ նվաճումները, որ հայ ժողովուրդը ձեռք է բերել անցած շուրջ քառասուն տարիների ընթացքում։ Այդ նվաճումները ավելի ակներև են դառնում, երբ վերհիշում ես, թե ինչ ժառանգություն էր ստացել նա անցյալից։ Տնտեսապես խիստ հետամնաց և իմպերիալիստական պատերազմից քայքայված երկիրը էլ ավելի վատթար վիճակի մեջ ընկավ դաշնակցականների տիրահռչակ տիրապետության օրոք։ Դադարել էին գործելուց այն չնչին ձեռնարկություններն անգամ, որոնք ժառանգություն էին մնացել անցյալից։ Հոկտեմբերյան են նվաճումները անցած 40 տարիների ընթացքում։

Ռեսպուբլիկայի արդյունաբերական արտադրանքի ծավալը ներկայումս 1913 թվականի համեմատությամբ աճել է 45 անգամ, ընդորում խոշոր արդյունաբերության մեջ՝ 136 անգամ։ Սովետական Հայաստանի արդյունաբերությունն այժմ մեկ օրում նույնքան արտադրանք է տալիս, որքան ավել է նախահեղափոխյան Հայաստանը ամբողջ 1919 թվականի ընթացքում։

Ցուցահանդեսի առաջին հարկի սրահներում տեղավորված է ծանր արդյունաբերության ամենակարևոր ճյուղերից մեկի՝ մեքենաշինության արտադրանքը։ Այդ բաժնի ցուցադրած նմուշներից առանձնապես աչքի են ընկնում՝ Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանի մեծ հզորության շարժական էլեկտրակայանները, տարբեր մեծության սինխրոն և ուղղահայաց գեներատորները, կոմպլեքսային և ուժային տրանսֆորմատորները։

Պատրաստի արտադրանքի տարումն ու տարահանումը պատկերող բարեկը ցույց է տալիս, որ գործարանի թողարկած ապրանքները լայն կիրառում են գտել ոչ միայն մեր Միության մեջ ու ժողովրդական դեմոկրատիայի երկրներում, այլև Մեքսիկայում, Արգենտինայում, Թուրքիայում, Եգիպտոսում, Իրանում, Աֆղանստանում, Հնդկաստանում, Բիրմայում և այլուրեք։ Նույն պահլիճում են դեսեղված Երևանի կարելի գործարանի արտադրանքը՝ տարբեր տեսակի փաթաթալարերը, հաղորդալարերը, կարելը, ինչպես նաև էլեկտրատեխնիկական և էլեկտրաշարժիչների գործարանների համեմատաբար փոքր չափերի ու հզորության շարժիչները։ Մեքենաշինության և հատուցաշինության բաժնում ցուցադրված են Զերժինսկու անվան գործարանի՝ խառատա-պտուտակահան հատուցները, Լենինականի մեխանիկական գործարանի ատաղենարան մամլիչը, Հոկտեմբերյանի մեխանիկական գործարանի ուղղաձիգ շապախման խոշոր հատուցը, տարբեր տեսակի կոմպրեսորներ, փականներ ու ծորակներ, Երևանի վերանորոգման գործարանում արտադրվող փայտա-սղոցման շրջանակը, բար հարթող մեքենան։ Արտադրանքի տարբեր տեսակներով ներկայացված է ցուցահանդեսում Լենինականի հեծանիվի գործարանը, որը մասնակցել է Հելսինկիի, Պոզնանի, Լայպցիգի, Բրյուսելի, Վիեննայի, Լիոնի, Միլանի, Բուենոս-Այրեսի, Դամասկոսի, Կարաչիի, Քարուլի, Պեկինի, Ջակարտայի միջազգային ցուցահանդեսներին ու տոնավաճառներին և գրավել մրցանակային տեղեր։

Առանձին ենթաբաժնում ցուցադրված են՝ արհեստագործական ուսումնարանի սանների ձեռքով պատրաստված հատուցների մոդելներ, փականագործի գործիքներ, փոքրիկ տրանսֆորմատորներ, էլեկտրաշարժիչ։

Դիագրամների թվական տվյալները վկայում են Սովետական իշխանության տարիներին մեքենաշինության բուռն զարգացումը, որի հետևանքով մեքենաշինական արտադրանքի թողարկումը 1913 թվականի համեմատությամբ ավելացել է 328 անգամ։

Ընդարձակ տեղ է հատկացված գունավոր մետալուրգիայի և լեռնահանքային արդյունաբերության բազմատեսակ հանքային պաշարների ու նրանց հիման վրա ստեղծված խոշոր ձեռնարկությունների արտադրանքի ցուցադրմանը։ Ընդհանուր ուշադրություն է գրավում Հայաստանի օգտակար հանածոների ռելիֆ բարեկը, որը հարուստ պատկերացում է տալիս ռեսպուբլիկայի հանքային հարստությունների, նրանց բնական տարածվածության, նոր հայտնաբերված գունավոր մետաղների մեծ պաշարների մասին։ Հաջորդաբար ցուցադրված են պղնձի, մոլիբդենի, կապարի, ցինկի կոնցենտրատների, կրաքարի, երկաթաքարի, գլաքարի, բրոմիտի, հանքարարների, և ապա Ալավերդու պղնձաձուլական կոմբինատի ստացված պղնձի, Քանաքեռի ալյումինի («Կանաչ») գործարանի արտադրած ալյումինի ձուլվածքները, գունավոր մետալուրգիայի խոշոր կենտրոնների՝ Ալավերդու և Զանգեզուրի գործա-

բանների ու հանքերի աշխատանքային առանձին պրոցեսները ներկայացնող նկարները։

Հայաստանի քիմիական արդյունաբերության արտադրանքից այցելուների ուշադրությանն են ներկայացված կաուչուկի, կալցիումի, կարբիդի, կաուստիկ սոդայի, նաիրիտի, մեծ ու փոքր ավտոդողերի, Կիրովականի քիմիական կոմբինատում առաջիկայում արտադրվելիք սինթետիկ կորունդի նմուշները։ Հետաքրքրությամբ է դիտվում ժողովրդա-տնտեսական կարևոր նշանակություն ունեցող նեֆելինային սիենիտների արդյունաբերական օգտագործմանը նվիրված սխեման, որտեղ իրենց բնական տեսքով ցուցադրված են հանքաքարի այդ տեսակից արտադրվելիք նյութերը՝ ալյումինը, պոտաշը, պորտլանդ ցեմենտը, երևանիտը, հրակայուն և այլ նյութեր։ Դիագրամում բերված թվերը ցույց են տալիս, որ 1940 թ. համեմատությամբ 1956 թ. կաուչուկի արտադրանքը ավելացել է 30, կալցիումի կարբիդինը՝ 25,5, իսկ կաուստիկ սոդայինը՝ 80 անգամ։

Շինարարական նյութերից, որոնցով այնքան հարուստ է հայկական լեռնաշխարհը, ցուցադրված են տուֆը՝ իր բազմազան տեսակներով, բազալտը, պեմզան, ֆիլիտը, մարմարը, հրակայուն աղյուսը, շիֆերը և բազմաթիվ այլ նյութեր։

1913 թ. Հայաստանում գոյություն ունեցող 10 մանր էլեկտրակայանների փոխարեն այժմ ռեսպուբլիկան ծածկվել է էլեկտրակայանների խիտ ցանցով, որոնք մեկ օրում ավելի շատ էներգիա են արտադրում, քան արտադրվել է ամբողջ 1913 թվականի ընթացքում։

Էլեկտրականությամբ լուսավորվող հետաքրքիր քարտեզով ցույց է տրված էլեկտրացանցի տարածվածությունը, նրա օբյեկտները ու հիդրոէլեկտրակայանների ավտոմատացումը։ Ցուցադրված են Սևան-Հրազդանի և Որոտանի կասկադների վրա կառուցվելիք նոր էլեկտրակայանների սխեմա-նկարները, ինչպես նաև զարգացման մեծ հեռանկարներ ունեցող էլեկտրաճշգրիտ սարքաշինական գործիքների նմուշները։

Մանր արդյունաբերության զարգացման բազայի հիման վրա աճել ու զարգացել է ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունը։ Ընդարձակ սրահում տեսնում ենք էլեկտրալամպերի, էլեկտրալուսավորման և արմատուրայի, ժամացույցների, հախճապակու, ցինկապատ ամանեղենի, դպրոցական պիտույքների, պլաստմասսայի և կուլտուր-կենցաղային դործածության զանազան այլ առարկաների արդյունաբերական արտադրանքի նմուշները։

Լայն սպառման ապրանքների արտադրությունը բարձրացնելու, աշխատավորության հարաճուն պահանջները բավարարելու ուղղությամբ ձեռք բերված հաջողությունների մասին են վկայում ստենդում փակցված սխեմաներն ու դիագրամներում բերված թվերը, 1940 թ. համեմատությամբ 1956 թվականին կոշիկի արդյունաբերության արտադրանքը ավելացել է 6 անգամ, բրդյա գործվածքեղենինը՝ 6 անգամ, տրիկոտաժեղենինը՝ 13 անգամ։ Ռեսպուբլիկայի տեքստիլ արդյունաբերության արտադրանքը 1913 թ. համեմատությամբ աճել է 65 անգամ, սննդարդյունաբերությանը՝ 18 անգամ։ Այս նույն դահլիճում են դասավորված Հայաստանի նշանավոր կոնյակներն ու գինիները, որոնցից մի քանիսը միջազգային տոնավաճառներում արժանացել են ոսկե և արծաթյա մեդալների, ինչպես նաև սննդի արդյունաբերության մյուս ձեռնարկությունների արտադրանքը։

Այցելուների ուշադրությունն են գրավում Հայաստանի անտառային հարստությունը ներկայացնող անտառանյութի զանազան տեսակները, որոնք ներկայացված են բնական տեսքով ու կիսաֆաբրիկատի ձևով, և մանավանդ փայտամշակման վարչության տարբեր ֆաբրիկաներում արտադրված կահույքը՝ իր դրեթե բոլոր տեսակներով։

Լայն սպառման ապրանքների արտադրության ընդգավառում հսկայական դեր է խաղում արհեստագործական կոոպերացիան։ Այցելուները հետաքրքրությամբ են դիտում հարուստ և նուրբ զարդանկարներով ոսկերչական առարկաները, ճաշակով և հմտությամբ կատարված ասեղնագործության նմուշները։ Բայց արհեստագործական կոոպերացիայի արտադրանքի մեջ հիմնական տեղը գրավում են ցուցադրված բազմատեսակ գորգերը։ Դրանք վկայում են, որ դեռևս հնից եկող հայկական գորգագործության լավագույն տրադիցիաները ոչ միայն չեն մոռացվել, այլև ժամանակի ընթացքում ավելի են զարգացել ու մշակվել։

Ժողովրդական տնտեսության և կուլտուրայի նվաճումների ցուցահանդեսում պատշաճ տեղ է հատկացված գյուղատնտեսությանը։ Սյունազարդ դահլիճը բացվում է Հայաստանի ռելեֆ քարտեզով։ Այստեղ բերված են կոնկրետ թվեր, որոնք պատկերացում են տալիս ռեսպուբլիկայի վարելահողերի, արոտավայրերի, բնական խոտհարքների ու անտառների մասին։ Բավական է ասել, որ վարելահողերի ընդհանուր տարածությունը Սովետական իշխանության տարիներին ավելացել է մեկուկես անգամ։ Մեծ հետաքրքրությամբ են դիտվում ցորենի՝ «Եղվարդի 4», «կարմիր սլֆահատ», «սպիտակահատ», «ուկրաինկա», «գալգալոս» և բերքատու այլ նոր սորտերը, ինչպես նաև

մշակվող մյուս հիմնական կուլտուրաների՝ կարտոֆիլի, բամբակի, ծխախոտի, եգիպտացորենի, ճակնդեղի, բանջարեղենի և բազմաթիվ մրգերի տեսակները։ Բացատրագրերում ու քաղվածքներում նշվում են գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման, հանքային պարարտանյութերի օգտագործման տվյալները, բերքատվության բարձրացման աստիճանը։

Ոռոգման սիստեմի ընդարձակումը պատկերող հատուկ քարտեզը և դիագրամում բերված թվերը ցույց են տալիս, որ եթե 1913 թվականին Հայաստանի ոռոգելի հողատարածությունը կազմում էր ընդամենը 9700 հեկտար, ապա 1957 թվականին այն հասավ 166 հազար հեկտարի։ Արգնի-Շամիրամի, Թալինի, Կոտայքի ջրանցքների շինարարության ավարտումը հնարավորություն կտա մոտակա տարիներին ոռոգել հողերի հսկայական մասսիվներ և դրանց հիման վրա զարգացնել խաղողագործությունն ու պտղաբուծությունը։

Սովետական իշխանության տարիներին բուռն վերելք է ապրել հայ կուլտուրան, արվեստը, գիտությունն ու գրականությունը։ Այդ են վկայում մի քանի սրահներում ցուցադրված կուլտուրայի տարբեր բնագավառներն ու ճյուղերը դրսևորող նյութերը, որոնք ընդհանուր հետաքրքրություն են առաջացնում։

Կուլտուրայի և արվեստի բաժնում հատուկ տեղ է հատկացված Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնին և Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանակիր Գ. Սունդուկյանի անվան դրամատիկական թատրոնին։ Հայկական կատարողական լավագույն կոլեկտիվներից ներկայացված են պետական երգչախումբը, ժողովրդական երգիպարի վաստակավոր անսամբլը, ժողովրդական գործիքների անսամբլը, Կոմիտասի անվան վաստակավոր կվարտետը։

Մեծ հետաքրքրություն է առաջացնում գիտության բաժինը, ուր ներկայացված է Գիտությունների ակադեմիան՝ իր բազմաթիվ գիտահետազոտական հիմնարկներով։

Հատուկ բաժին է հատկացված սովետահայ գրականության նվաճումներին։

Ցուցահանդեսում լավ են ներկայացված առողջապահության, սոցիալական ապահովության և ֆիզիկական կուլտուրայի բնագավառներում ձեռք բերված խոշոր հաջողությունները։ 1913 թվականին Հայաստանն ուներ ընդամենը 18 բուժ. հիմնարկություն, որտեղ աշխատում էր 73 բժիշկ, իսկ 1955 թվականին գործում էր 235-ից ավելի բուժ. հիմնարկ՝ ավելի քան 3357 բժիշկներով։ 10 հազար մարդուն ընկնող բժիշկների թվով մեր ռեսպուբլիկան արդեն վաղուց առաջ է անցել կապիտալիստական շատ երկրներից։ Աշխատավորության հանգրստին և բուժման գործին են ծառայում ռեսպուբլիկայի 19 սանատորիաները և 8 հանգրստյան տները։ Հաջող են ձևավորված և հաճույքով են դիտվում ճարտարապետության, շինարարության և կոմունալ տնտեսության ցուցասրահները։

Սովետահայ ճարտարապետությունը յուրացնելով և զարգացնելով անցյալի հարուստ ժառանգությունը, իր շեշտված ազգային ոճով, ձևերի հղկվածությամբ, պարզությամբ ու հարբստությամբ վաղուց արդեն ուրույն տեղ է գրավել միութենական ճարտարապետության մեջ։

Հիացմունքով են դիտվում սովետահայ ճարտարապետության գլուխ գործոց Լենինի անվան հրապարակի և Երևանի կայարանի ճարտարապետորեն լիովին ավարտված ներդաշնակ անսամբլները։

Շինարարության բաժնում առանձին քարտեզով և լուսանկարներով ցույց են տրված շինարարական աշխատանքների աննախընթաց թափն ու խոշոր մասշտաբները, կառուցման տարբեր աստիճաններում գտնվող բնակելի, վարչական և ուսումնական շենքերը։

Դիտելով ժողովրդական տնտեսության և կուլտուրայի նվաճումների ռեսպուբլիկական ցուցահանդեսը, կրկին ու կրկին համոզվում ես, որ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան հայ ժողովրդին ոչ միայն փրկեց ֆիզիկական բնաջնջման ահեղ վտանգից, այլև լայն հնարավորություն ընձեռեց նրան պատմական կարճ ժամանակամիջոցում ստեղծելու առաջնակարգ արդյունաբերություն, նորագույն տեխնիկայով հագեցած գյուղատնտեսություն, առաջադեմ գիտություն և կուլտուրա։

Վ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ